ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
31.08.2022թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/18Հ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք. Երևան « 23 » « 12 » 2022թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Քարտաշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 31.08.2022թ. կնքված N **ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/18Հ** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 1962-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանավորված Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված հիմնանորոգման աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով կատարված նվազեցումներով՝ նվազեցնել նշված աշխատանքների նկատմամբ 2022 թվականին իրականացվելիք հեղինակային հսկողության ծառայությունների գինը **3 611 500** (երեք միլիոն վեց հարյուր տասնմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամով, ծառայության գինը **7 768 920** (յոթ միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամի փոխարեն կկազմի **4 157 420** (չորս միլիոն մեկ հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2022թ նոր Վճարման ժամանակացույցը համաձայն՝ Հավելված 1-ի:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011002632	ՀՀ 2050022451291001
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 00813453
գլխավոր քարտուղար	տնօրեն
Ա. Երիցյան	Դ. Քարտաշյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/18Հ գնման պայմանագրի
«23» «12» 2022թ. կնքված
Թիվ 2 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	98111140/53	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ91+176-կմ96+176 հատվածի հիմնանորոգման ոլորանների պարամետրերի բարելավման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություններ	---	---	---	---	---	---	---	---	4 157 420	4 157 420	4 157 420	4 157 420	**4 157 420**
2	98111140/55	Հ-39, /Մ-10/ - Գավառ - /Մ-10/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ4+300-կմ7+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություններ	---	---	---	---	---	---	---	---	4 950 000	8 259 165	8 259 165	8 259 165	**8 259 165**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050022451291001
ՀՎՀՀ 00813453
տնօրեն
Դ. Քարտաշյան

(ստորագրություն)
Կ.Տ.